Արձանագրություն N 2.1

ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերնակառույցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 10.11.2017թ.
ժամը 16:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Սարիբեկյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Ս.Մաթևոսյան / գնահատող /
Ն.Մարտիրոսյան / բացող /
Ն.Մանուկյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն.Հարությունյան

Բացակայում էր
հանձնաժողովի անդամ՝ Ա.Քոչարյան /գնահատող/

1. **Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցումների և պարզաբնումների մասին**

(Մ. Սարիբեկյան)

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերնակառույցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մրցույթի հնարավոր մասնակցի կողմից 2017 թվականի նոյեմբերի 9-ին ներկայացվել են հարցումներ:

1.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է մասնակցին տրամադրվելիք պարզաբանումների փոփոխված հայտարարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Սարիբեկյան

Անդամ՝ ---------- Ս. Մաթևոսյան

---------- Ն. Մարտիրոսյան

---------- Ն. Մանուկյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման փոփոխության մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 2.1 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը N ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերնակառույցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2017թ. նոյեմբերի 9-ին մրցույթի հնարավոր մասնակցի կողմից ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2017թ. նոյեմբերի 10-ին տրամադրված պարզաբանումների փոփոխված տարբերակը.

Հարցադրում N 1

Մեր կազմակերպությունը մտադիր է մասնակցել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից հայտարարված N ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով բաց մրցույթին: Ուղարկում ենք Ձեզ հայտի ապահովման համար պահանջվող «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված բանկային երաշխիքի ձևը և խնդրում ենք տեղեկացնել մեզ արդյոք այս ձևը ընդունելի է Պատվիրատուի կողմից թե ոչ:

Պարզաբանում N 1

Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ հայտի ապահովման համար ներկայացրած բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, իսկ կանխավճարի ապահովման համար ներկայացրած բանկային երաշխիքի մեջ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Հարցադրում N 2

Խնդրում ենք նաև պարզաբանել՝ արդյոք հայտի ապահովումը բանկային երաշխիքով ներկայացնելու դեպքում պարտավոր ենք ներկայացնելու նաև միակողմանի հաստատված հայտարարությունը՝ տուժանքը, հավելված N9-ով սահմանված ձևին համապատասխան:

Պարզաբանում N 2

Մասնակցի կողմից հայտի ապահովումը պետք է ներկայացվի բանկային երաշխիքի տեսքով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Նազիկ Հարությունյանին:

Հեռախոս՝ 011621821
Էլ.փոստ՝ tender1@minurban.am

ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով